

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՅԱՀԱՅՏԵՑԻՆ ՄԵՐ ՀԻՆ ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Վտանգը նրա մէջն է որ գրամագլուխ գիգելու մարմաջով տարուած են մեզ մօտ ո՛չ միայն չարչին ու առեւտրականը, ո՛չ միայն տգէտ ամբօխը, այլ բոլոր խաւերը նոյնիսկ նրանք, որոնք հրաւիրուած են զբաղուելու քաղաքականութեամբ, գրականութեամբ, գիտութեամբ»<sup>1</sup>:

### Սիմոն Զաւարեան

2008-ին սկսված՝ հայ-թուրքական բանակցությունների և Թուրքիայի կողմից հրահրվող՝ ադրբեջանական սպառնալիքների սարդոստայնի մեջ խճճված Հայաստանի Հանրապետությունը թևակոխել է իր պատմության այն վտանգավոր շրջափուլը, երբ միանգամայն իրական է դառնում «սելջուկյան նոր արհավիրքը»՝ «քաղաքակիրթ» (թուրքական) և բարբարոս (ադրբեջանական) հորդանքների հստակ դերաբաշխումների տեսքով: Ժամանակին այս ամենի դուռը բացած բյուզանդական քաղաքականությունը իր ներկա՝ արևմտյան և հյուսիսային կերպավորումներով, կարող է նաև մեզ անպաշտպան թողնել նման հեռանկարի առջև: Բայց ամենավտանգավորն այն է, որ ճիշտ չգնահատելով նոր իրավիճակը, թույլ ենք տալիս մեկը մյուսից ավելի աններելի սխալներ:

Փորձելով պարզել 2008թ. աշնանից Թուրքիայի հետ սկսված՝ հրապարակային բանակցություններում արձանագրվող վտանգավոր զարգացումների պատճառները, տեղի ունեցածը բացատրում ենք միայն իշխանության սխալներով, հաճախ էլ՝ արտաքին թելադրանքների հանդեպ մեր անզորությամբ: Իսկ ահա իշխանություններն իրենք սեփական քայլերից առաջ եկող դժգոհությունը դիտարկում են սոսկ ներքաղաքական դիմակայության, կամ էլ Հայաստան-Սփյուռք հարթության վրա՝ կուսակցական կամ հատվածական գունավորում տալով **համահայկական** բանավեճին:

Մինչդեռ, ավելի քան ակնհայտ է, որ և՛ իշխանության անժխտելի ճախողումները, և՛ արտաքին որոշակի թելադրանքները իրենց «սև գործն» են անում առաջին հերթին ազգի ներքին դիմադրողականության թուլացման պայմաններում, ինչը թույլ է տալիս կղզիացնել ընդդիմության օջախները: Եվ այսօր, երբ հայ-թուրքական արձանագրություններին ասված «ոչ»-ը արձանագրում է «այո»-ի փակուղի մտնելու փաստը, հենց ի՛նքն է կանգնում տեղի ունեցածի խորքային պատճառները վերհանելու խնդրի առաջ: Անցած ամիսներին մեզանում ծավալված հախուռն դիմադրությունը ոչ թե քանդել է իշխանության պատը, այլ իշխանու-

1 Սիմոն Զաւարեան, Վաշխառուական հոգեբանութիւն, «Սիմոն Զաւարեան», խմբ. Գ. Տաւնապետեան, գ. հատոր, Անթիլիաս, 1997, էջ 558:

թիվ 3(28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՎԵՄ համահայկական հանդես

թյունն ինքն է ընկել սեփական անհեռատեսության ծուղակը: Ուստի, մեր շուրջը փոթորկող հորձանքի «փրփուրների» հետ խաղալու փոխարեն՝ պարտավոր ենք նայել նրա խորքը և խոստովանել, որ արձանագրությունները լուսարձակեցին այն ցավոտ խնդիրները, որոնք կուտակվել են Հայաստանի երրորդ Հանրապետության գոյության ողջ ժամանակամիջոցում:

Վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ համահայկական դիմադրության ծավալմանը խոչընդոտող հիմնական գործոնը հայաստանյան արդի հասարակության արժեհամակարգի լրջագույն ձևախեղումն է և որպես դրա հետևանք՝ երկրի քաղաքացիների օտարումը պետությունից: Ավելին, Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի կայացել իբրև պետություն՝ իրեն բնորոշ քաղաքական, տնտեսական և հոգեմտավոր գործառույթներով: Իրականում մենք ունենք սոսկ երկրի **կառավարիչներ**, որոնց իրադրային գործունեությունը որևէ կապ չունի Հայոց պատմության ու մշակույթի հետ:

Հայաստանի ազգային-պետական կյանքի անկատարությունը շրջապատող աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում վերածվում է արժեքային խորը ճգնաժամի, որի պատճառը գտնելու համար պարտավոր ենք երեք «գուգահեռ հայացքներ» նետել դեպի անցյալը.

**առաջինը**՝ վերջին 18 տարիների, **երկրորդը**՝ անցած 100-ամյակի, իսկ **երրորդը**՝ նախորդ հազարամյակի կտրվածքով, որպեսզի գտնենք այն ընդհանուրը, որը միավորում է մեր պատմության ընկալման այս երեք **տեսադաշտերը**:

Վերանկախացման արդյունքում՝ տարբեր քաղաքական ցուցանակների տակ, 1991-ից մինչև 2008-ը արտաքուստ փարվել ենք այս կամ այն «վեհ գաղափարին», բայց գործնականում՝ իբրև պետականություն կառուցող ազգ, յուրացրել ենք ընդամենը մեկ «արժեք»։ 1991-ին մեզանում իշխանության եկած գիտաշխատողները գործնական քաղաքականության մեջ արմատավորեցին ոչ թե իրենց գովերգած արևմտյան ազատականությունը, այլ դրամի՝ **փողի** արևելյան-չարչիական պաշտամունքը: Նույն «արժեքների» հերթափոխը, իսկ իրականում՝ ժառանգորդականությունը, իրենց վրա վերցրին նաև անկախացած Հայաստանի հաջորդ ղեկավարները: Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետությունը սկսեց մարմին առնել առանց հոգու, գաղափարի և այն կոփող քաղաքական կամքի:

Հայաստանի անկախացումից հետո ազգային ու համամարդկային արժեքների տարանջատումը պետական ինստիտուտներից և կյանքի պարզունակ առևտրականացումը բերեցին նրան, որ մեզանում վաճառքի առարկա դարձան ոչ միայն նյութական արժեքները՝ հողը, ռազմավարական ձեռնարկությունները, բնական պաշարները, այլև կոչումները, աստիճանները, ընտրովի պաշտոնները, այսինքն՝ այն ամենը, ինչը խորհրդանշում է մեր արժանապատվությունը և հպարտությունը: Արդյունքում՝ 1991-ից մինչև 2008-ը, մեր երկրում չվաճառված մնացին միայն ազգի հավաքական **հիշողությունը**, **Հայրենիքի** գաղափարը, **Հայ Պատը** և իհարկե՝ ազատագրված **Արցախի** ու **Հայաստանի** ներկա սահմանները:

Նման զարգացումները պայմանավորող հիմնական «գործառնական աշխատակարգը» ընտրությունների ընթացքում Հայաստանի քաղաքացիներին բաժանվող, իսկ ընտրություններից հետո՝ «հետ բերվող» հարյուր միլիոնավոր դոլարների կաշառքն էր: Սեփական ձայները վաճառելու անսքող պարտադրանքը «հայաստանյան գրիպի» էր վերածվում որոշակի նպատակադրումով: Սրանով ազգային պետականության շղարշի տակ ձևավորված արևելյան **փողապետությունը** աստի-

ճանաբար «դաստիարակում» էր օրենքը դրամին ստորադասող, ուստիև ավելի բարձր արժեքների վաճառքին ունակ՝ մի կամագուրկ հասարակություն:

Ուստի միանգամայն տրամաբանական է, որ ժամանակի ընթացքում հերթը հասնելու էր նաև ազգի **հիմնական** արժեքների աճուրդին: Որովհետև եթե մի երկրում հրապարակավ գնվում է ամեն ինչ, այդ թվում՝ օրենսդիր ու գործադիր իշխանությունը վերահսկելու իրավունքը, ուրեմն պետք չէ լինել Կարլ Մարքս՝ եզրակացնելու համար, որ նրանում պետք է գործի նաև «**փող-ապրանք-փող**» շղթան, որի միջին օղակը սովորական ապրանքի վերածվող **պաշտոնն** է: Եվ ի տարբերություն զարգացման որակական ռեսուրսների մասին մտածող արևմտյան դրամատիրության, արևելյան փողապետությունը վաղ թե ուշ կանգնելու էր հետևյալ հարցի առջև. ինչպե՞ս մեծացնել կուտակված դրամագույխը, երբ երկրի ներսում ամեն ինչ արդեն վաճառված է: Ուստի, «**փող-պաշտոն-փող**» տրամաբանության շրջագծում կայացած 2008թ. նախագահական ընտրություններից հետո, որոնց ժամանակ ընտրողների քվեները գնելու համար ծախսվեցին հարյուր միլիոնավոր դոլարներ, առաջ եկավ «ներքին շուկան» ընդլայնելու սուր պահանջմունք, ինչը ժամանակային առումով համընկավ Մերձավոր ու Սիջին Արևելքի և նախկին ԽՍՀՄ-ի հարավային սահմանների հատույթում գտնվող «հայկական սեպի» գործառույթները փոխելու և տարածաշրջանային շուկաներն ընդլայնելու՝ արտաքին ուժերի ցանկության հետ:

Հենց սկզբից ճշտենք, որ մենք չենք պատրաստվում թերագնահատել արտաքին լուրջ գործոնների դերակատարությունը հայ-թուրքական «երկխոսության» մեջ: Սակայն պնդում ենք որ արտաքին թելադրանքով պայմանավորվող՝ երկրի աշխարհաքաղաքական գործառույթների փոփոխությունը մի բան է, դրանց համատեքստում սեփական ազգային շահերի պաշտպանությունը, տվյալ պարագայում՝ Թուրքիայի հետ հարաբերություններում առանց նախապայմանների սկզբունքի ամրագրումը, բոլորովին այլ «երաժշտություն»: Օրնիքում առանց նախապայմանների երկխոսության մասին ազդարարող տերություններից ո՛չ մեկը սկզբունքորեն շահագրգռված չէ մեզ միակողմանի արձանագրություններ պարտադրելու հարցում, ինչը նշանակում է Հայաստանի վրա սեփական ազդեցության փոխարինումը թուրքական ազդեցությամբ:

Ուրեմն՝ խորքային «**ինքնապարտադրողի**» դերում փողով ձեռք բերված քաղաքական իշխանությանը նորից դրամական տեսք տալու հարցում իշխող վերնախավի սուր, կենսական շահագրգռվածությունն էր: Քանի որ իշխանությունը Հայաստանում «լավագույն բիզնեսն» է, ապա ոմանց սկզբում համակել էին նրա ընդարձակման ռոմանտիկ երազանքներ: Թվում էր, թե կարելի է դյուրությամբ բացել հայ-թուրքական սահմանը և էլեկտրաէներգիայի ու պետության կողմից վերահսկվող այլ ապրանքների վաճառքի միջոցով կրկնապատկել, անգամ եռապատկել ընտրություններում ծախսված ահռելի գումարները: Մանավանդ որ, պետական պարտքի դիմաց Ռուսաստանի ընկերություններին հանձնված Հայաստանի ու ժանյութի ոլորտի ձեռնարկությունների հզորացումը, մասնագետների հաշվարկներով, շուտով բերելու է նրան, որ մեզանում էլեկտրաէներգիայի արտադրանքի ծավալները մի քանի անգամ գերազանցելու են նրա հայաստանյան պահանջարկը:

Ուստի, պատահական չէր, որ 2008-2009թթ. հայ-թուրքական բանակցությունների յուրաքանչյուր հանգրվանում քննարկվում էր (և շարունակում է քննարկվել) Թուրքիային էլեկտրաէներգիա վաճառելու՝ թվում է թե տասներորդական հարցը: Այս հասկանալի «տվյալսանքները» ոմանք կարող են ոչ էական շարժառիթ համա-

րել, բայց երբ քաղաքական որոշումներ կայացնողների արժեքային համակարգը ու դրանից բխող գործողությունների «խորքային շարժիչը» հիմնվում է նման ելակետի վրա և այդ ամենին գումարվում է նաև արտաքին բիզնես-գործընկերների «համառ խնդրանքը», ապա խոստովանենք՝ դիմանալն այնքան էլ դյուրին չի լինում: Դա՛ էր պատճառը, որ հայ-թուրքական սահմանը օր առաջ բացված տեսնելու դիմաց Հայաստանի նոր իշխանությունները այդքան արագ նահանջեցին առանց նախապայմանների երկխոսության սկզբունքից:

Եթե Հայաստանում իշխող մտայնության տեսանկյունից ազգային արժեքները սկսել են չափվել «դրամական համարժեքով», ստացվում է, որ դրանք նույնպես «գին» ունեն: Երբ բացակայում է ազգային բարոյականի վրա հիմնված այն անբեկանելի արգելքը, որը թույլ չի տալիս սահմանը բացելու և Թուրքիայի հետ առևտուր անելու դիմաց համաձայնել պատմական հարցերով հանձնաժողով ստեղծելուն, ուրեմն՝ յուրաքանչյուր կողմից մեկական խումբ «ցնդած պատմաբաններ» հավաքելը և նրանց անվերջ բանավեճերի մեջ Հայոց ցեղասպանության իրողությունը թաղելը, այս դիտանկյունով, իսկապես որ, «չնչին գոհողություն է»: Ի վերջո, կարելի է պնդել, որ մեռելները ապրողներից թանկ չեն, եթե «ապրելը» մեկնաբանում ես նման ելակետով:

Հայաստանի կառավարող վերնախավի արժեքների սանդղակում տեղի ունեցած հստակ տեղաշարժի արդյունքում առաջին պլան դուրս եկած չարչիական մտածելակերպը, չգիտես ինչու, որակվում է իբրև «պրագմատիզմ», թերևս ենթադրելով, որ ոչ ոք չի հակադարձելու նման բացահայտ տգիտությանը: Անգամ դասական՝ ամերիկյան պրագմատիզմը (գործնապաշտություն) որևէ կապ չունի նպատակը՝ գործը, մանր-չարչիական հաշվարկին գոհաբերելու հետ, քանզի **պրագմատիզմի** (Պիրս, Ջոն Դյուի) հիմքում ընկած է գործի հաջողության ապահովման գերխնդիրը: Արդի փիլիսոփայության հասկացության ինքնակարգով նման քաղաքականությունը թերևս կարելի է դիտարկել Բենտամի մատնանշած՝ հաճույք (հայաստանյան բնորոշմամբ՝ կայֆ) ստանալու և չարչարանքից հնարավորինս խուսափելու գերխնդրի՝ **ուտիլիտարիզմի** (օգտապաշտության) ամենագոռեհիկ դրսևորման տիրույթում, եթե մի պահ մոռանանք նրա հայկական համարժեքը՝ չարչիությունը:

Խոստովանենք նաև, որ Թուրքիայում մինչև 2008 թվականը մեր մասին ավելի բարձր կարծիք ունեին և սկզբում նման անսպասելի նվեր չէին էլ սպասում: Բայց տեսնելով, որ գործ ունեն ոչ թե աշխարհաքաղաքական հակառակորդի, այլ լավ ապրելու գերխնդրով առաջնորդվող սովորական փողապետության հետ, թուրքական «գայի ախորժակը» մեծացավ, քանզի թշնամին հասկացավ, որ նույն տրամաբանությամբ կարելի է ցեղակից Ադրբեջանին վերադարձնել ԼՂՀ ազատագրված տարածքները:

Նախորդ սերունդների ժառանգությունը արագորեն մախելու պարագայում, իսկապես, կարելի է լավ ապրել դեռևս 1912 թվականին Միմոն Ջավարյանի կողմից արձանագրված խայտառակ տարբերակով. «**Լաւ ապրելը մենք կը հասկնանք անասնական-ֆիզիքական (խմել-հագուելու) մտքով եւ տարուած ենք ո՛չ թէ դրամը կեանքի բարձրացման ծառայեցնելու, այլ նկատելու զայն իբրեւ նպատակ, աստուածութեան նման մի սրբութիւն**»<sup>2</sup>: Չմոռանանք նաև, որ նրա գաղափարակից-ընկերը՝ Ռոստոմը, Մեծ եղեռնից ընդամենը մեկ տարի առաջ՝ 1914-ի ապրիլին, նախազ-

<sup>2</sup> Միմոն Ջավարեան, նույն տեղում:

գուշացրեց, որ նման ձևով «լավ ապրելու» արդյունքում՝ հնարավոր է, որ ընդհանրապես չվերապրենք իբրև ազգ. «Հայ հարուստը հոգին կը տայ, բայց փող չի տայ. չեն մտածում, որ վաղը թշնամին հոգին էլ կ'առնէ, փողն էլ<sup>3</sup>»:

Վտանգված միջավայրում լավ ապրելու երազանքով տարված տարածաշրջանի ամենահարուստ ազգը Առաջին աշխարհամարտից հետո դարձավ ամենաաղքատը: Իսկ նրան թալանած թուրքը արդեն 95 տարի շարունակ փորում-հայտնաբերում է հայերի թաքցրած ոսկիները, որոնք ճակատագրի հեզանքով՝ այդպես էլ չեն սպառվում: Եվ ժամանակի ընթացքում Թուրքիան այնքան է հարստացել, որ այսօր փորձում է Հայաստանի ապաշրջափակումը դարձնել «արյան գին»՝ ոչ միայն իր հանցագործությունները կոծկելու, այլև Ադրբեջանի ախորժակները բավարարելու դիմաց:

Ուստի, հայ-թուրքական «երկխոսության» բարձրակետը դարձած՝ չարաբաստիկ արձանագրությունների հրապարակումից հետո, ազգի այն մասը, որը դեռևս չի կորցրել մտածելու ունակությունը, ուղղակի ցնցակաթվածի (շոկի) մեջ ընկավ, սակայն, ուշքի գալով, տեղի ունեցող խայտառակության մեջ, չգիտես ինչու, սկսեց «համաշխարհային դավադրություն» փնտրել: Բնական է, որ նման ցնցումները ավելի ուժեղ էին լինելու Մփյուռքում, որը անցած տասնամյակներում համեմատաբար հեռու է եղել հայաստանյան իրողություններից: Կարծում ենք, սակայն, որ չափից ավելի ցնցվելու պարագայում կարելի է խճճվել գլոբալ հաշվարկների մեջ և տեղի ունեցողի պատճառները փնտրել **մեզանից դուրս**: Իսկ դրանք իրականում **մեր ներսում** են, քանզի Հայաստանում ժամանակի ընթացքում առաջ է եկել ամեն ինչ դրամական փոխարժեքով գնահատող որոշակի խավ, նրան բնորոշ՝ ծայրահեղորեն օգտապաշտական գաղափարախոսություն և այդ խավի շահերն արտահայտող իշխանություն: Ուստի, հասկանալի է, թե ինչու հայ-թուրքական արձանագրությունները **համիմաստ հակագղեցության** չեն արժանանում ոչ միայն իշխանությունների, այլև հասարակության զգալի մասի կողմից: Նման պայմաններում օգտապաշտական տրամադրություններով վարակված նրա առավել շահամոլ հատվածը սկսում է տարվել թշնամու օգնությամբ բարեկեցության հասնելու վտանգավոր խաբկանքով:

Հարց է առաջանում. բայց արդյո՞ք այդպես է մտածում ինքը՝ Թուրքիան, որի վարչապետի Վաշինգտոնում, 2009-ի դեկտեմբերի սկզբներին դրսևորած «դարաբաղյան ախորժակները» սառը ցնցուղի վերածվեցին հայաստանյան փողապետության ողջ բուրգի համար: Պատճառն այն է, որ Հայաստանի իշխանության ներսում հիմա էլ **լավ են ապրում**, իսկ ի՞նչ կլինի, եթե տարվելով **ավելի լավ ապրելու** երազանքով, «վատ են ապրելու...» պատմական «խրատի» հեղինակի՝ Հայաստանի առաջին նախագահի նման, կորցնեն իշխանությունը, այսինքն՝ փողը: Եվ ահա, երբ փողապետությունը սկսում է լքորեն տատանվել՝ **լավ և ավելի լավ** ապրելու իր նվազագույն և առավելագույն ծրագրերի արանքում, ժամանակն է, որ տրվի տեղի ունեցածի հստակ գնահատականը:

Այսպիսով, ի՞նչ էր 2008-2009 թթ. հայ-թուրքական հարաբերություններում արձանագրված «առաջընթացը». Հայաստանը արտաքին շրջափակումից դուրս բերելու «հերոսական ճի՞գ» և դրան հետևած՝ ժամանակավոր տեղատվութթյուն, թե՞ դավաճանություն ազգի և հայրենիքի արմատական շահերի հանդեպ: Որքան էլ

3 Ռոստոմ. նամականի, մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրուս, Համազգայինի Վահէ Սէբեան տպարան, 1999, էջ 613:

առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ՝ ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը, ավելին՝ մեր պարագայում ուղղակի հակացուցված են նման քաղաքական գնահատականները, քանզի **փողապետությունը** և **ազգն ու հայրենիքը** բացարձակապես տարբեր հարթությունների վրա գտնվող հասկացություններ են: Եվ ներկա իշխանության ավելի քան պարզունակ քայլերի մեջ ռեալ իրողության՝ **լավ ապրելու** երազանքով տարված փողապետության իդեալի հանդեպ դավաճանության նշույլ անգամ չկա: Առկա իշխանությունը **չի՛ դավաճանել** ինքն իրեն, քանզի նրա իդեալը փողն է, իսկ ահա ազգն ու հայրենիքը՝ սոսկ փող կուտակելու միջոցներ են: Բնական է նաև, որ նման իշխանության համար «Մեր հայրենիքին» (որը համառոտեն փորձում է փոխարինել մեկ այլ օրհներգով) դավաճանելու կամ՝ չդավաճանելու խնդիր ուղղակի գոյություն չունի:

Ուրեմն՝ հայ-թուրքական «երկխոսությունը» փակուղի մտնելուց հետո մեր առաջադրանքը փողապետությանը հասցեագրված՝ արտաքին-քաղաքական խնդիրների պահանջատիրությանը չի սահմանափակվելու: Առաջիկայում իշխանությունը կարբագրի իր սխալներն այնքանով, որքանով Թուրքիայի առաջադրած «ղարաբաղյան նախապայմանը» սկսել է վտանգել **լավ ապրելու** նրա երազանքը, ուստիև խիստ կերպով նեղացրել է ազգային շահերի հաշվին «**բիզնես անելու**» հնարավորությունները: Բայց հենց որ նման սպառնալիքը վերանա, փողապետությունը նորից կանցնի իր իդեալների իրականացմանը:

Նման պայմաններում իրական խնդիրը **մեր իդեալները**, «Մեր հայրենիքի» արժեքային ընկալումը Հայաստանում վերականգնելու անհրաժեշտության մեջ է, որը պահանջում է շատ ավելի բարդ ու տևական աշխատանք: Հայտնի է, որ երկրի կառավարիչների ընչաքաղցությունն ու տգիտությունը չափավորելու համար հեթանոսության շրջանում ունեինք **քրմեր**, քրիստոնեության դարաշրջանում՝ **հոգևորականություն**, իսկ նոր ու նորագույն ժամանակներում՝ ազգի հոգեմտավոր ընտրանուն համախմբող տարաբնույթ **կառույցներ ու անհատներ**, որոնց միջամտության շնորհիվ կյանքի էր կոչվում մեր արժեքներից տեր կանգնելու **պարտականությունը**<sup>4</sup>: Երբեմն դա իրականացվում էր կառավարիչների կամավոր ընտրությամբ, երբեմն՝ մշակութակենտրոն հայ հանրության հզոր հակազդեցությամբ, իսկ երբեմն էլ այն արժեքապահպան գործառույթի միջոցով, որի հանդեպ ժամանակին ընկրկում էին անգամ եգիպտական փարավոնները<sup>5</sup>:

Մինչդեռ, չունենալով երկրի կառավարման վարչական խնդիրները ազգային նպատակների վրա հիմնող՝ կայացած պետություն, ներկայումս ինքներս չենք հստակեցրել անգամ մեր նվիրական արժեքների, **սրբությունների**<sup>6</sup> հասարակության համար ընկալելի այն համակարգը, որը հարկ եղած դեպքերում վերաձվում է **արժեքային այլընտրանքի**: Ի վերջո, եթե պետությունը չի կատարում իր գործառույթները, ապա նրա փոխարեն ո՞վ է մեզանում այդ արժեքային այլընտրանքի կողմը, ո՞վ է մեր «քուրմը»՝ խիղճն ու միտքը:

Միգուցե **եկեղեցի**<sup>7</sup>ն, որը համենայն դեպս՝ Հայաստանում այդպես էլ հրապա-

4 Այս ասպարեզում Հայոց պետականության կուտակած ահռելի փորձի բացահայտման համար իր ներկա համարից «վե՛մ» համահայկական հանդեսը սկսում է տպագրել պրոֆ.Ալբերտ Ա. Ստեփանյանի «Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Հայքում» արժեքավոր ու միանգամայն այժմեական ուսումնասիրությունների շարքը, որոնց կիստե՛ն այլ հրապարակումներ:

5 Մանրամասները խորհուրդ ենք տալիս փնտրել լեհ վիպասան Բոլեսլավ Պրուսի «Փարավոն» վեպում, կամ դրա հիման վրա լեհահայ կինոռեժիսոր Եժի Կավալերովիչի նկարահանած համանուն կինոնկարում:

րակավ չդատապարտեց Հայոց ցեղասպանության փաստը կասկածի տակ դնելու **սրբապղծությունը** և միայն Անֆիլիասից հնչեց մեր նահատակների հիշատակին հավատարիմ **Հովվապետի** տագնապած ձայնը: Ի վերջո, պետականության պայմաններում եկեղեցին ոչ թե պարզ-նյութականի, այլ հոգևորի ու ազգային ավանդների պահապանն է, որի իրական գործառույթը ոչ թե շքեղ շենքերի, այլ շքեղ հոգիների «կառուցումն» է:

Իսկ միգուցե՝ **գիտության ու մշակույթի** մեր վաստակաշատ «քրմե՞րը», որոնք լռեցին ու աղպես էլ հավաքական կամք չդրսևորեցին՝ արձանագրությունները մերժելու հարցում:

Իսկ միգուցե՝ **քաղաքակա՞ն ուժերը**, որոնց մի մասը միայն միավորվեց՝ ազգին ու պետությանը սպառնացող ակնհայտ վտանգի պայմաններում, քանզի մյուս մասը ջալամի նման «թաքնվել» և սպասում է այն պահին, երբ Թուրքիայի սահմանների ճանաչումից ու ցեղասպանության փաստը կասկածի տակ դնելուց հետո, գործող իշխանությունը իր հաջորդ «բիզնես-նախագիծը» կդարձնի Արցախի վաճառքը՝ նրան տապալելու, բայց նույնն անելու, այսինքն՝ «ավելի քաղաքակիրթ բիզնեսով» զբաղվելու համար:

Այս ամենը մեզ բերում է այն եզրակացությանը, որ հոկտեմբերի 10-ի արձանագրությունների հանդեպ հայաստանայն հասարակության կրավորական վերաբերմունքի պատճառը ոչ միայն նրա արժեքային ուղենիշերը սահմանող պետական ինստիտուտների բացակայությունն է, այլև փողապետության պայմաններում մեր **հոգևոր, գիտամշակութային ու քաղաքական** կառույցների ազդեցության թուլացման փաստը:

Մենք չենք կարողանում կամ՝ չենք ցանկանում միավորվել անգամ այն պարագայում, երբ Հայաստանի դեմ Թուրքիան ու Ադրբեջանը շարունակում են հանդես գալ սելջուկյան-ցեղային միասնության սկզբունքով: Զանգի եթե մեր հարևանները 21-րդ դարի պետություններ են, ապա պետք է ունենան իրենց առանձին շահերը, մինչդեռ, ազգային-պետական շահը նրանք նույնացնում են արյունակիցների համերաշխության՝ ջունգլիների սկզբունքի հետ: Այսինքն՝ այսօր, ինչպես և 1000 տարի առաջ, փաստորեն, գործ ունենք Հայաստանը շրջափակած սելջուկյան հորդանների հետ:

Ուրեմն՝ մեզ համար արտաքին ճակատում «**քաղաքակիրթ**» **սելջուկն** է վտանգավոր, իսկ ներքին ճակատում՝ **չարչիացած հայը**, որի վրա է հիմնվում հայաստանյան իշխող վերնախավը, նրան բնորոշ՝ գաղափարախոսությունը և ի վերջո՝ իշխանությունը: Խոստովանենք նաև, որ «քաղաքակիրթ» սելջուկի ու չարչիացած հայի դիմակայության մեջ երկրորդը միշտ էլ մեր արժեքները գոհաբերել ու առաջիկայում էլ, հնարավորության դեպքում, անպայման՝ գոհաբերելու է իր **լավից ավելի լավ ապրելու** գերխնդրին:

Մեր կյանքի **հիմնական հակասությունը** հենց այս ջրբաժանով է անցնում, քանզի իրականում այսօր ո՛չ քաղցած ենք և ո՛չ էլ պարտված. միայն մեր շփոթված ոգին է տատանվում հաղթանակի ու պարտության սահմանագծին: Եվ ինչ-որ առումով պետք է շնորհակալ լինենք հոկտեմբերի 10-ի արձանագրությունների առաջ բերած քաղաքական թոհուրոհից, որը բացահայտեց մեր հին հիվանդության «նոր համաճարակը», որից փրկության միակ ճանապարհը ներքին բարոյաքաղաքական **հեղափոխությունն** է:

Մեր սուրբ նահատակների հոգիները, որոնք երկնքից հսկում են մեզ, պահան-

ջում են բոլոր նվիրյալների համախմբումը՝ ազգի ընդարմացած, հաճախ էլ փարթամ մոլախոտերի տակ հայտնված, բայց դեռևս կենդանի կապիտալը՝ **բարոյականը** վերականգնելու համար: Թշնամական շրջապատում գտնվող Հայաստանը եվրոպական փոքր երկրների նման չպետք է տարվի բարեկեցության համամարդկային տեսլականի **բացարձականացմամբ**:

Ավելին, նախքան երկրի խարխլված բարոյական հիմքերի վերականգնումը, արտաքին ճակատում հարկ է մտածել ոչ թե հաջողությունների, այլ միայն ու միայն՝ **նոր կորուստները** կանխելու մասին: Քանզի ճշմարտության ու արդարության հաստատման՝ մեր ազգային դարավոր ձգտումը հիմնվում է որոշակի բարոյական չափանիշների վրա: Ուստի գիտակցելով այդ փաստը, ինչպես **100** տարի առաջ՝ **1908** թվականին, այնպես էլ **100** տարի հետո՝ **2008** թվականին, մեզ մեկնած իր «բարեկամական ձեռքի» միջոցով Թուրքիան փորձում է արժեզրկելով՝ թուլացնել հայության այդ դարավոր ձգտումը, իսկ ահա մյուս ձեռքի՝ նույն **2008-2009** թվականներին իր իսկ կողմից տենդագին կերպով սպառազինված Ադրբեջանի միջոցով, սկսել է նախապատրաստել վերջնական՝ **մահացու հարվածը**: Եվ ո՛վ այսօր անտեսում է նման վտանգի առկայությունը, նա իր հոգու խորքում հաշտվել է մեր նոր կորուստների հեռանկարի հետ:

Հայ-թուրքական սահմանի փակ կամ բաց լինելու իրողությունները որևէ կապ չունեն այս իրական վտանգի հասունացման գործընթացի հետ: Ուստի հույսներս արտաքին ուժերի բարենպաստ դասավորության վրա դնելու փոխարեն՝ պետք է մտածենք նման սպառնալիքներին դիմակայելու գործին ունակ առողջ հասարակության ձևավորման մասին:

Ուրեմն, եթե չկարողանանք Հայաստանում դառնալ ազգային բարոյականության նորմերի պահանջատերը, չենք կարող պահանջատեր լինել ոչ միայն մեզ շրջապատող արտաքին աշխարհում, այլև ինչպես շուրջ **1000** տարի առաջ՝ Անիի կործանման օրերին, ինչպես **100** տարի առաջ՝ Մեծ եղեռնի դարաշրջանում, առաջիկայում ևս կարող ենք կորցնել Հայաստանի երրորդ Հանրապետության անցած **18** դժվարին տարիների համեստ ձեռքբերումները:



## THE PROTOCOLS REVEALED OUR OLD ILLNESSES

EDITORIAL